ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ - Ա

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒՆ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 48[1]-ին հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով 2008 թվականի մայիսի 23-ին կնքված կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի 9-րդ գլուխը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2482158 վկայականը, Վալերիկ Ժորայի Թովմասյանի 2023 թվականի ապրիլի 4-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Վալերիկ Ժորայի Թովմասյանին կառուցապատման իրավունքով տրամադրված 0,002 հեկտար մակերեսով հողամասի՝ 2008 թվականի մայիսի 23-ին կնքված կառուցապատման իրավունքի տրամադրման մասին (գրանցված է սեղանամատյանում 2671-ով) պայմանագրի ժամկետը 15 տարով երկարաձգելուն: